ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » մայիսի 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-086-03.04.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 482 - Ա որոշումը:

Հարգանքով՝

/ԷԴՈՒԱՐԴ
ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-086-03.04.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծի 1-ին հոդվածի համաձայն նախատեսվում է «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Իրավասու պաշտոնատար անձինք պարտավոր են հնգօրյա ժամկետում քննարկել պատգամավորի գրավոր հարցումը կամ առաջարկը և գրավոր պատասխանել նրան: Եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու կամ առաջարկը քննարկելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը պատգամավորին է տրվում դիմումն ստանալուց հետո երեքշաբաթյա ժամկետում՝ հարցումը կամ առաջարկն ստանալուց հետո հնգօրյա ժամկետում պատգամավորին գրավոր տեղյակ պահելով հետաձգման պատճառների մասին:»:

Նախագծի հիմնավորման մեջ նշվում է, որ նախագիծը միտված է պատգամավորի գործունեությունն արդյունավետորեն կազմակերպելուն: Այդ նպատակով առաջարկվել է «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համանմանությամբ նախատեսել հնգօրյա ժամկետ պատգամավորի գրավոր հարցմանը կամ առաջարկին պատասխանելու համար: Ընդ որում, որպես ուղենիշ դիտարկվել է «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ անձանց գրավոր հարցումներին պատասխանելու ժամկետը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծով առաջարկվող փոփոխությունը վերաբերում է պատգամավորի գրավոր հարցումներին կամ առաջարկներին գրավոր պատասխանելու ժամկետներին:

Գտնում ենք, որ նախագծով առաջարկվող կարգավորումները խնդրահարույց են հետևյալ պատճառներով՝

1. «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը, ինչից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորն ազատ է դիմելու տեղեկատվություն ստանալու համար՝ որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի՝ առաջնորդվելով «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով և հայցելով այն տեղեկատվության տրամադրումը, որը ներառված է «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կարգավորման շրջանակում:

«Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, սահմանելով գրավոր կարգով տեղեկատվության տրամադրման հնգօրյա ժամկետ, միևնույն ժամանակ նախատեսել է այն տեղեկությունների ծավալը, որը թույլատրելի է տրամադրել այդ ժամկետում: Ինչպես բխում է նշված օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասից, խոսքը ցանկացած տեղեկատվության մասին է, եթե այն՝

ա. չի պարունակում պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք,

բ. չի խախտում մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը,

գ. չի պարունակում հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները,

դ. չի բացահայտում մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք),

ե. չի խախտում հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները:

Այսինքն, անձը, օգտվելով «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքից, կարող է ստանալ միայն այնպիսի տեղեկություններ, որոնք չեն հանդիսանում նույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սահմանափակումներ:

Մինչդեռ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պատգամավորն իրավունք ունի հարցումներով և առաջարկներով դիմելու պետական կառավարման համակարգի մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց:

Ինչպես բխում է վերոնշյալ նորմից, պատգամավորը կարող է ցանկացած հարցմամբ կամ առաջարկով դիմել պետական կառավարման համակարգի մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց: Այսպիսով, սույն դրույթում սահմանափակումները չեն նույնանում «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված սահմանափակումների հետ: Մասնավորապես, «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն տեղեկատվություն տնօրինողը՝ բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք, իսկ նույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք): Մինչդեռ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն *պետական, ծառայողական, առևտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունները*

ները պատգամավորական էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողովի հարցմամբ հանձնաժողովին են տրամադրվում, իսկ հանձնաժողովի անդամներն այդ տեղեկություններին կարող են ծանոթանալ օրենքով սահմանված կարգով, իսկ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն քննիչ հանձնաժողովի պահանջած տեղեկությունները և եզրակացությունները պետք է նրան ուղարկվեն գրավոր դիմումն ստանալուց հետո երկշաբաթյա ժամկետում, եթե դիմումի մեջ ավելի երկար ժամկետ նշված չէ, կամ դիմումի հասցեատերը հանձնաժողովի պահանջը կատարելու համար ողջամիտ ժամկետ չի առաջարկում: *Պետական, ծառայողական, առևտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունները հանձնաժողովի գրավոր դիմումով նրան են տրամադրվում օրենքով սահմանված կարգով*: Հանձնաժողովի անդամները դիմումով պահանջվող տեղեկություններին առնչվող նյութերին կամ փաստաթղթերին կարող են ծանոթանալ նաև դրանց գտնվելու վայրում:

Նույն օրենքի 122-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն *պետական, ծառայողական, առևտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունները* մշտական հանձնաժողովի հարցմամբ նրան են տրամադրվում, իսկ հանձնաժողովի անդամներն այդ տեղեկություններին կարող են ծանոթանալ օրենքով սահմանված կարգով: Մշտական հանձնաժողովի անդամները հանձնաժողովի հարցմամբ պահանջված տեղեկություններին առնչվող նյութերին կամ փաստաթղթերին կարող են ծանոթանալ նաև դրանց գտնվելու վայրում:

Մեջբերված հոդվածների ուսումնասիրությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորին կարող է տրամադրվել նաև պետական, ծառայողական, առևտրային, բանկային, ինչպես նաև բժշկական, նոտարական, փաստա-

բանական և այլ գաղտնիք: Մինչդեռ «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կարգավորումներով օրենքով պահպանվող գաղտնիք պարունակվող տեղեկատվության տրամադրումը մերժվում է:

Հաշվի առնելով տրամադրվող տեղեկատվության բովանդակային ծավալը՝ օրենքը պատահականորեն չէ, որ սահմանել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր չհանդիսացող անձի համար տեղեկությունների տրամադրման տարբեր ժամկետներ: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորին տեղեկությունների տրամադրման առավել երկար ժամկետի նախատեսումը պայմանավորված է նաև նրա հարցման կամ առաջարկի հետ կապված առավել հանգամանալից ուսումնասիրության, հարցումների և այլ աշխատանքների կատարման հանգամանքով, քանի որ շատ դեպքերում տեղեկատվության տնօրինողը ոչ թե մեկ, այլ մի քանի պետական կառավարման մարմիններ կարող են լինել: Այդ առումով տեղեկատվության տրամադրումը շատ դեպքերում պահանջում է լրացուցիչ աշխատանքների իրականացում: Հենց այդ պատճառով է, որ օրենսդիրը նախատեսել է երեքշաբաթյա ժամկետ:

2. Հաջորդ պատճառը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի հարցմանը պատասխանելու համար հնգօրյա ժամկետի նախատեսման ոչ նպատակահարմարության հետ կապված այն է, որ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, սահմանելով երեքշաբաթյա ժամկետ պատգամավորի գրավոր հարցումը կամ առաջարկը քննարկելու և դրանց պատասխանելու համար, չի սահմանափակել իրավասու պաշտոնատար անձանց իրավունքը՝ տրամադրելու անհրաժեշտ տեղեկությունները մինչև երեքշաբաթյա ժամկետի լրանալը: Այսինքն, եթե հարցվող տեղեկությունն իր բնույթով այնպիսին է, որ այն հնարավոր է տրամադրել օրենքով նախա-

տեսվածից ավելի կարճ ժամանակում, ապա իրավասու անձինք կարող են այն տրամադրել՝ չսպասելով առավելագույն ժամկետի լրացմանը: Պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ նախագծով առաջարկվող կարգավորումից բխում է, որ եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու կամ առաջարկը քննարկելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը պատգամավորին է տրվում դիմումն ստանալուց հետո երեքշաբաթյա ժամկետում՝ հարցումը կամ առաջարկն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում պատգամավորին գրավոր տեղյակ պահելով հետաձգման պատճառների մասին:

Այսինքն, ստացվում է, որ, եթե տրամադրվող տեղեկությունն այնպիսին է, որ դրա տրամադրման համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանքներ (ուսումնասիրություններ, հարցումներ), իրավասու պաշտոնատար անձը պետք է լրացուցիչ նամակով ծանուցի պատգամավորին դրա մասին: Գտնում ենք, որ դա կարող է ոչ միայն առաջացնել լրացուցիչ նամակագրական աշխատանքներ, այլև դնել իրավասու անձի վրա լրացուցիչ պարտականություն՝ գրավոր հիմնավորում տալու յուրաքանչյուր կոնկրետ հարցման կամ առաջակի կապակցությամբ:

Մինչդեռ օրենքի գործող կարգավորմամբ իրավասու պաշտոնատար անձինք պարտավոր են երեքշաբաթյա ժամկետում քննարկել պատգամավորի գրավոր հարցումը կամ առաջարկը և գրավոր պատասխանել նրան: Ինչպես ցույց է տալիս «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ուսումնասիրությունը, նշված երեքշաբաթյա ժամկետը հետաձգելու հնարավորություն օրենքով նախատեսված չէ, նույնիսկ եթե առկա է այդ առնչությամբ լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտություն:

Վերոգրյալից բխում է, որ պետական կառավարման համակարգի մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձինք թեև սահմանափակված չեն հարցվող տեղեկությունները տրամադրելու երեքշաբաթյա ժամկետից շուտ,

սակայն միևնույն ժամանակ սահմանափակված են տրամադրելու այդ տեղեկությունները երեքշաբաթյա ժամկետից ուշ: Այսինքն, բոլոր աշխատանքները և ուսումնասիրություն-ները՝ կապված պատգամավորի հարցմանը կամ առաջարկին պատասխանելու հետ, պետք է ցանկացած դեպքում կատարվեն նշված ժամկետում, ինչը նշանակում է, որ գործող կարգավորումը լրացուցիչ նամակագրական աշխատանքների կատարման և պատասխանը տրամադրելու հետաձգման պատճառների հիմնավորման պահանջով չի ծանրաբեռնում իրավասու պաշտոնատար անձանց՝ միաժամանակ նախատեսելով երեք-շաբաթյա ժամկետն անշեղաբար պահպանելու պարտականություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք նախագծով քննարկվող հոդված-ները թողնել անփոփոխ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 մայիսի 2019 թվականի N 482 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արտակ Ասատրյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-086-03.04.2019-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. մայիսի 3
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-086-03.04.2019-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-20-Ն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ

«1) հնգօրյա ժամկետում քննարկել պատգամավորի գրավոր հարցումը կամ առաջարկը եւ գրավոր պատասխանել նրան: Եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու կամ առաջարկը քննարկելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը պատգամավորին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ երեքշաբաթյա ժամկետում՝ հարցումը կամ առաջարկը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում պատգամավորին գրավոր տեղյակ պահելով հետաձգման պատճառների մասին.»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

- **Ներկա իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 51-րդ հոդվածի 1-ին մասի՝ յուրաքանչյուր ոք ունի պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություն-ներ ստանալու եւ փաստաթղթերին ծանոթանալու իրավունք: 2003թ. սեպտեմբերի 23-ին ընդունված «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ ՏԱ օրենք) 9-րդ հոդվածի 7-րդ մասը հստակ ինգօրյա ժամկետ է սահմանում տեղեկություններ պահանջող հարցումներին պատասխանելու համար? Նույն հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ եթե հարցման մեջ նշված տեղեկությունները տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունները դիմողին են տրվում հարցումը ստանալուց հետո 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունները տրամադրելու վերջնական ժամկետը:

Մինչդեռ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքի 6-րդ հոդվածում ամրագրված կարգավորումը նախատեսում է պատգամավորի հարցմանը պատասխանելու երեքշաբաթյա ժամակետ՝ անկախ այն հանգամանքից տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է լրացուցիչ աշխատանքի կատարում, թե՝ ոչ: Կարծում ենք, որ անհրաժեշտ է տարբերակված մոտեցում ցուցաբերել եվ լրացուցիչ աշխատանքի կատարման անհրաժեշտության բացակայության դեպքում նախատեսել պատգամավորի հարցմանը պատասխանելու ինգօրյա ժամկետ, եւ միայն պահանջվող տեղեկությունը ճշտելու, վերլուծություն կատարելու կամ այդ տեղեկությունը հավաքելու այսինքն՝ լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտության դեպքում՝ երեքշաբաթյա ժամկետ:

- **Առաջարկվող կարգավորումը**

Օրենքի նախագծով առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքում ամրագրել պատգամավորի գրավոր հարցումը կամ առաջարկը քննարկելու եւ գրավոր պատասխանելու ինգօրյա ժամկետ, իսկ դրա կապակցությամբ լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտության դեպքում միայն պահպանել գործող օրենքով նախատեսված երեքշաբաթյա ժամկետը՝ նախատեսելով հետաձգման պատճառների մասին պատգամավորին տեղյակ պահելու իրավասու պաշտոնատար անձանց պարտականությունը:

- **Ակնկալվող արդյունքը**

Սահմանել պատգամավորի հարցմանը իրավասու պաշտոնատար անձանց կողմից պատասխան տրամադրելու ինգօրյա ժամկետ, իսկ լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտության դեպքում երեքշաբաթյա ժամկետ: Նման կարգավորումը հնարավորություն կտա առավել արդյունավետորեն կազմակերպել պատգամավորի գործունությունը եւ իրացնել պատգամավորի համար օրենքով նախատեսված երաշխիքները՝ խուսափելով չարդարացված ձգձգումներից: